Eng | Հայ | Türk | Рус | Fr

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ



**Հիմնական էջ**
Գլխավոր
Պատվիրակություններ
Կայքի քարտեզ
Հետադարձ կապ
Կապ մեզ հետ
Հղումներ

**Նախօրեին**
Հայոց պատմություն
Լուսանկարներ

**Հայոց Եղեռնը**
Ցեղասպանություն
Հայոց Եղեռնը
Ժամանակագրություն
Լուսանկարներ
Քարտեզագրում
Մշակութային եղեռն
Հիշի՛ր

**Վավերագրեր**
Ամերիկյան
Անգլիական
Գերմանական
Ռուսական
Ֆրանսիական
Ավստրիական
Թուրքական

**Հետազոտում**
Մատենագիտություն
Վերապրողներ
Ականատեսներ
Մամուլ
Մեջբերումներ
Դասախոսություններ

**Ճանաչում**
Պետություններ
Կազմակերպություններ
Տեղական
Արձագանք

**Առաքելություն**
**Տնօրենի ուղերձը**
**Մամլո հաղորդագրություն**
**Էլ.թերթ**
**Հարցազրույցներ**
**Նորություններ**
**Գիտաժողովներ**
**Միջոցառումներ ՀՑԹԻ-ում**
**Գրքի տարի**
**Լեմկինի կրթաթոշակ**
**Կրթաթոշակառուները**
**Թանգարան**
Թանգարանի մասին
Այցելություն
Մշտական ցուցադրություն
Ժամանակավոր
Օն լայն
Հիշատակի բացիկներ
**Ինստիտուտ**
Գործունեությունը
Հրատարակություններ
ՀՑԹԻ հանդեսներ
Գրադարան
ՀՑԹԻ հավաքածուները
**Եղեռնի հուշահամալիր**
Պատմությունը
Լուսանկարներ
Հիշատակի օր
ՀՑԹԻ հիմնադրամ

**Նորություններ**

## ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ - 100

***Այս տարի լրանում է Գերմանա-հայկական ընկերության հիմնադրման 100-ամյակը***

22.07.2014






1914 թվականի ամռանը գերմանացի հասարակական գործիչ, աստվածաբանության դոկտոր, արևելագետ և մեծ հայասեր Յոհաննես Լեփսիուսի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Գերմանա-հայկական ընկերություն» հասարակական կազմակերպությունը:

Երկար տարիներ զբաղվելով Հայկական հարցով՝ Յոհաննես Լեփսիուսը միջոցներ է հավաքում Փոքր Ասիայի հայ բնակչության և տարբեր երկրներում ապաստանած հայ փախստականների համար որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու համար: Հենց նրա անվան հետ է կապված Գերմանա-հայկական ընկերության գործունեությունը, որի նախագահն էր մինչև իր մահը:

1914 թվականի հունիսին Բեռլինում տեղի է ունենում ընկերության առաջին նիստը, որտեղ ընկերության նախագահ Յոհաննես Լեփսիուսը իր տեղակալներ՝ Պաուլ Ռորբախի և Ջեյմս Գրինֆիլդի, գործավարներ՝ Է. Շտիրի և Ա. Խաչիկյանի հետ միասին քննարկում են Գերմանա-հայկական ըներության խնդիրները:

Ընկերության հիմնադրումից մեկ տարի անց, երբ Օսմանյան կայսրության ղեկավարները սկսեցին հայերի կոտորածներն ու տեղահանությունը, ընկերության նախագահ Յոհանես Լեփսիուսը մեկնեց Կ. Պոլիս, ուր հանդիպեց Էնվեր փաշայի հետ, պահանջեց անհապաղ դադարեցնել հայերի զանգվածային կոտորածները, սակայն ստացավ մերժում: Վերադառնալով Բեռլին՝ 1915 թվականի հոկտեմբերի 9-ին Գերմանա-հայկական ըներության ժողովում հաղորդում տվեց արևմտահայության ցեղասպանության և տեղահանության մասին: Ժողովի մասնակիցները նամակ հղեցին Գերմանիայի կանցլերին՝ խնդրելով կանխարգելել հայության նկատմամբ կիրառվող վայրագությունները: Սակայն խնդրանքը մնաց անպատասխան, գերմանական կառավարությունը որևէ միջոց չձեռնարկեց: 1918 թվականի ապրիլի 22-ին ընկերությունը դիմում հղեց ռայխստագին՝ պահանջելով ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ հայերի ցեղասպանությանը վերջ տալու համար: Այս դիմումը ևս մնաց անհետևանք:

Լեփսիուսին և նրա համախոհներին ստեղծված իրավիճակում ոչինչ չէր մնում անել, քան ձեռնամուխ լինել Եղեռնից փրկված հայ կանանց և երեխաների խնամքի կազմակերպմանը: *«Ներկայումս միայն մեր հիմնական աշխատանքային դաշտում հավաքվել են 2700 երեխաներ, որոնք իրենց փոքրիկ բերանները բաց են արել հաց ստանալու համար և առանց սննդի սովամահ կլինեն: ...Մեր օգնության նպատակն է հնարավորին չափ շատ աղետյալների, առանձնապես երեխաների փրկել», -իր զեկույցներից մեկում հայտնում էր Լեփսիուսը:*

LEPSIUSHAUS SICUT PHOENIX POTSDAM

Լեփսիուսը ջանք ու եռանդ չէր խնայում նաև գերմանական հասարակության շրջանակներում Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի ճշգրիտ պատկերը ներկայացնելու համար: Գերմանական մամուլը գտնվում էր խիստ գրաքննության տակ, լույս էին տեսնում բացառապես թուրքամետ և իրականությունից շատ հեռու հրապարակումներ: Ուստի Լեփսիուսը դիմեց համարձակ քայլի՝ հավաքել ձեռքի տակ ունեցած տեղեկությունները և հրատարակել առանձին գրքով:




Խիստ գաղտնիության պայմաններում և բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով, ընկերությունը հրատարակում է հայ ժողովրդի մեծ ողբերգությունը պատկերող փաստաթղթերի ժողովածուներ՝ Գերմանիան և Հայաստանը 1914-1918, 1919թթ., Հայ ժողովրդի բնաջնջումը, 1919թ., որոնք մերկացնում են երիտթուրքերի կանխամտածված կազմակերպված և իրականացրած հայերի ցեղասպանության փաստը:

1919 թվականին Լեփսիուսը հրատարակում է «Հայ ժողովրդի մահը» գիրքը, ինչի հետևանքով տարագրվում է չեզոք երկիր՝ Հոլանդիա:

Հարկ է նշել նաև, որ չնայած Գերմանա-հայկական ընկերության ոդեգրած հայանպաստ և մարդասիրական գործունեությանը, ընկերությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրք-գերմանական դաշնակցության պայմաններում, զերծ չմնաց քաղաքական քարոզչությունից, սակայն այն մեծ ներդրում ունեցավ հայության բեկորներին անխուսափելի

**Հետևե՛ք մեզ**

**Վիրտուալ թանգարան**




**Միջազգային գիտաժողով**



**ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ.**

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

Երևան, ապրիլի 21-22, 2014թ.
ավելին ...

**Ժամանակավոր ցուցադրություն**



**ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ.**
**դաշնակիցներ, կերպարներ, կոտորածներ**
2014թ. ապրիլի 21-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը կազմակերպում է ժամանակավոր ցուցադրություն: Կներկայացվեն մինչ օրս անհայտ հարյուրավոր բնօրինակ նմուշներ՝ ծաղրանկարներ, փոստային բացիկներ, պաստառներ և այլ

մահվանից փրկելու և ապրուստ հայթայթելու գործում:

Հայ ժողովուրդը միշտ երախտապարտ կլինի մեծ մարդասերին՝ նրա հայապաշտպան գործունեությանը: Յոհաննես Լեփսիուսի գերեզմանից բերված հողն ամփոփված է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի կենտրոնական ճեմուղու ձախ կողմում գտնվող Հուշապատի մեջ: 2008 թվականին Հայոց ցեղասպանության թանգարան – ինստիտուտը կազմակերպեց Յոհաննես Լեփսիուսի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով և անվանական փոստային բացիկ թողարկեց: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում 2013 թվականին «Հայփոստը» թողարկեց «Յոհաննես Լեփսիուս» նամականիշ:

ShareThis Facebook Tweet Google +

Հետ

նյութեր, որոնք տարբեր պատկերագրական ներկայացումներով դատապարտում են Թուրքիան որպես ցեղասպանություն իրագործած երկիր:

ավելին ...

**Լեմկինի կրթաթոշակ**



**ՀՅԹԻ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է 2014Թ. ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ**

ավելին ...

**Ժամանակավոր ցուցադրություն**



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՒԿ ԶՈՀԵՐԸ**

2014 թվականին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն առաջին անգամ կազմակերպում է ժամանակավոր ցուցադրություն նվիրված Հայոց ցեղասպանության զոհ դարձած երեխաների ողբերգական ճակատագրին:

ավելին ...

**Հիշի՛ր**



Խոսրով Տատյան, 1908-1915 թթ. զբաղեցրել է Ուրֆայի կառավարչատան գանձապահի պաշտոնը: Նահատակվել է թուրքական իշխանության հրահանգով 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

ավելին ...

**Հայոց ցեղասպանության ուսումնասիրության միջազգային հանդես**




ավելին ...

Հայաստան, Երևան, 0028
Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
Հեռ.: (374 10) **39 09 81**
Ֆաքս: (374 10) **39 10 41**

2007-2014 © Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Էլ.հասցե: info@genocide-museum.am